ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«12» ապրիլի 2017թ. № 154 - Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 7-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2014 թվականի հունվարի 10-ի «Էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների կատարման ուղեցույցը հաստատելու վերաբերյալ» թիվ 7-Ա հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Մաս IV-ի, մաս V-ի և մաս VI-ի 1-ին կետի 6-րդ և 7-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) բացվում է պատուհան՝ «Ջավա (Java)» ծրագրով, որը երեք լեզվով է՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն,»

«7) եթե ընթացակարգը չափաբաժիններով է, ապա մատակարարը բացված պատուհանի ձախակողմյան հատվածում սեղմում է «Հայտեր» դաշտը և բացված աջակողմյան հատվածում ընտրում է (օգտագործելով «v» նշանը) այն չափաբաժինը (չափաբաժինները), որին (որոնց) ցանկանում է մասնակցել,»:

2) Մաս IV-ի, մաս V-ի և մաս VI-ի 1-ին կետում ավելացնել նոր՝ 12.1 ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12.1) եթե 7-ից 12-րդ քայլերն իրականացնելու ժամանակ համակարգը ցուցադրում է սխալի մասին հաղորդագրություն, ապա սխալը ուղղելուց հետո պետք է կրկին սեղմել պահպանել սեղմակը,»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Վ. ԱՐԱՄՅԱՆ